ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 167-Ա

<<17>> դեկտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդհոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթով, կարևորելով համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության և դաստիարակության, գեղագիտական և մշակույթային զարգացման աջակցության անհրաժեշտությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է.

1. ՀայաստանիՀանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ և համայնքային ոչ առեվտրային կազմակերպություններ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ծնողական վճարումների զեղչեր սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք ավագանու 2022 թվականի մարտի 17-ի N13 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին>> N 39-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. ՀայաստանիՀանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>>, <<Լանջիկի Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>>, <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, <<Մարալիկի երաժշտական դպրոց>>, <<Մարալիկի արվեստի դպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկների /հետագայում՝ կազմակերպություններ/ տնօրեններին.

Ուսումնասիրել և հաշվառել համապատասխան կազմակերպություններ հաճախող սույն որոշման հավելվածում նախատեսված ընտանիքների սոցիալական կարգավիճակը և 2025 թվականի հունվարի 1-ից շահառու հանդիսացող ընտանիքների համար կիրառել սույն որոշման հավելվածով նախատեսված ծնողական վճարումների համապատասխան զեղչեր և ամենամսյա տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝10	**դեմ՝0**	**ձեռնպահ՝1**
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<17>> դեկտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 17-ի N 167-Ա որոշման

<<Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2023 թվականի
հունիսի 21-ի թիվ 39-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԾՆՈՂՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ

Հ/հ	Ընտանիքի սոցիալական կարգավիճակը	Ծնողական վճարման զեղչի չափը (%)
1.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաների ծնողական վճարի զեղչում	100.0
2.	Զոհված, մահացած զինծառայողների երեխաների ծնողական վճարի զեղչում	100.0
3.	Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողական վճարի զեղչում	100.0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաների ծնողական վճարի զեղչում	50.0
5.	Հաշմանդամ և անաշխատունակ ծնողի /ծնողների/ երեխաների ծնողական վճարի զեղչում	100.0
6.	Հինգ և ավել անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքի երեխայի /երեխաների/ ծնողական վճարի զեղչում	100.0
7.	Չորս անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքի երեխայի /երեխաների/ ծնողական վճարի զեղչում	50.0
8.	Ընտանիքից միաժամանակ երկու և ավելի երեխաներ մանկապարտեզ և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախելու դեպքում մեկ երեխայի ծնողական վճարի զեղչում	50.0
9.	<<Մարալիկի երաժշտական դպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկում երկու մասնագիտությամբ սովորող սանի դեպքում մեկ մասնագիտության համար սահմանվող ծնողական վճարի զեղչում	100.0

>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<17>> դեկտեմբերի 2024 թվական
քաղաք Մարալիկ